

Թուրքիայի ներգրավվածությունը տարածաշրջանային վերջին զարգացումներում

Եկմալյան Գ. Ս.

*Երևանի պետական համալսարան,
Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ (Երևան, ՀՀ)
yekmalyangagik@gmail.com*

Հանգուցաբառեր. Թուրքիա, ծավալապաշտական քաղաքականություն, Միջերկրական ծով, Լիբիա, Արցախյան հակամարտություն, Կատարի ճգնաժամ

Участие Турции в последних региональных развитиях

Екмалян Г. С.

*Ереванский государственный университет,
факультет международных отношений (Ереван, РА)
yekmalyangagik@gmail.com*

Аннотация: В исследовании мы представили последний период агрессивной политики Турции по отношению к странам региона. Мы также попытались раскрыть суть турецкой политики, показали ее участие в последней Арцахской войне. Таким образом, Турция со своей идеологией и основанной на ней политикой остается угрозой для стран региона.

Ключевые слова: Турция, политика экспансии, Ливия, Средиземное море, Арцахский конфликт, катарский кризис

Turkey's Participation in the Latest Regional Developments

Yekmalyan G. S.

*Yerevan State University, Faculty of International Relations (Yerevan, RA)
yekmalyangagik@gmail.com*

Summary: In the study, we presented the last period of Turkey's aggressive policy towards the countries of the region. We also tried to reveal the essence of Turkish politics, showed its participation in the last Artsakh war. Thus, Turkey, with its ideology and its policy based on it, remains a threat to the countries of the region.

Keywords: Turkey, the policy of expansion, Libya, the Mediterranean Sea, the Artsakh conflict, the Qatar crisis

Հետազոտական աշխատանքի մեջ կխոսենք Թուրքիայի ներգրավվածության մասին տարածաշրջանային վերջին զարգացումների մեջ: Պայմանականորեն այդ ներգրավվածությունը բաժանել ենք երեք մասի՝ մերձավորարևելյան, արևելամիջերկրածովյան և կովկասյան: Մերձավորարևելյան տարածաշրջանը վերջին տարիներին շարունակում է սրընթաց փոփոխվել, նախկին թշնամիները դառնում են դաշնակիցներ (ԱՄԷ-ն և Բահրեյնը և Իսրայելի հետ նրանց հարաբերությունների կարգավորումը), և, ընդհակառակը, Ծոցի արաբական երկրներն ավելի ու ավելի են հեռանում միմյանցից (Կատարի ճգնաժամը): Եվ այստեղ Թուրքիան բացառություն չէ: Անկարայի հարաբերությունները Մերձավոր Արևելքի երկրների հետ վերջին տարիներին խիստ վատացել են. «քաղաքական իսլամիզմի» և «նեոօսմանիզմի» վրա հիմնված Ռ. Թ. Էրդողանի քաղաքականությունը քայլ առ քայլ հանգեցրել է Անկարայի և արաբական աշխարհի հարաբերությունների լիակատար տապալմանը: Իր իշխանության գալու սկզբում Էրդողանը՝ Իսրայելին ակտիվ քննադատելու և

պաղեստինցիներին աջակցելու իր հայտարարություններով ջերմ ընդունելության արժանացավ արաբական աշխարհում: Հիմա իրավիճակն այլ է: Թուրքիան ցույց է տալիս ծավալապաշտական հստակ նկրտումներ:

Ինչպես հայտնի է, 2017 թվականի հունիսին Սաուդյան Արաբիան, ԱՄԷ-ն, Բահրեյնը և Եգիպտոսը խզեցին դիվանագիտական հարաբերությունները Կատարի հետ [1]: Նրանք Կատարին վերջնագիր էին ներկայացրել¹, և Associated Press-ի տվյալներով, դրանում, ի թիվս այլ պահանջների, պահանջներ են եղել կասեցնել Թուրքիայի հետ ռազմական համագործակցությունը և Կատարից դուրս բերել թուրքական ռազմակայանը: Երբ Դոհան հրաժարվեց կատարել վերջնագրի պահանջները, Սաուդյան կոալիցիան պատժամիջոցներ սահմանեց Կատարի

¹Այդ երկրները Կատարին մեղադրում էին տարածաշրջանում գործող ծայրահեղական գաղափարախոսությանն ու սահաբեկչական խմբավորումներին աջակցելու, ինչպես նաև արաբական այլ երկրների ներքին գործերին միջամտելու և «այնտեղ անվտանգության և կայունության հետ կապված իրադրության սրման» մեջ:

նկատմամբ: Տնտեսական շրջափակման առաջին 48 ժամվա ընթացքում Թուրքիան պարենամթերքով և այլ ապրանքներով բեռնատար ինքնաթիռներ է ուղարկել Կատար: Բացի այդ, ավելացել է այնտեղ տեղակայված թուրքական ռազմական կոնտինգենտի չափը: Այսինքն, վերջնագրի պահանջների կատարման փոխարեն Թուրքիան ավելացրեց զինծառայողների և զրահատեխնիկայի թիվը:

Կատարի դիվանագիտական ճգնաժամը միայն ամրապնդեց Անկարայի և Դոհայի հարաբերությունները՝ դառնալով նրանց ռազմավարական դաշինքի շարունակությաննշան: Իսկ Թուրքիան նրանից ոչ միայն աշխարհաքաղաքական առավելություն ստացավ, այլև ծանրակշիռ տնտեսական օգուտներ [2]: Կատարն արդեն մի քանի անգամ նրան փրկել է արժույթային կոլապսից՝ կապված լիբիայի կտրուկ անկման և թուրքական Կենտրոնական բանկի գրեթե դատարկ ռեզերվների հետ: Կոշտ արտարժույթով կատարական տրանշը Թուրքիայի վճարային հաշվեկշռի համար իրական փրկություն է²:

Թեև Պարսից ծոցում թուրքական զորակազմի ներկայության ընդլայնումը ջերմորեն ընդունվեց Կատարի ղեկավարության կողմից, տարածաշրջանում թուրքական ռազմական հզորության ավելացումը լուրջ մտավախություններ է առաջացնում երկրի հարևանների՝ մասնավորապես Սաուդյան Արաբիայի և ԱՄԷ-ի մոտ: «Թուրքիայի ռազմական ներկայությունը Արաբական ծոցում արտակարգ իրավիճակ է: Այն ուժեղացնում է բևեռացումը, ինչպես նաև հաշվի չի առնում Ծոցի երկրների և նրա ժողովուրդների ինքնիշխանությունն ու շահերը», — Twitter-ում գրել էր ԱՄԷ ԱԳ նախարար Ա. Գարգաշը [3]: Թուրքական Anadolu Agency գործակալության փոխանցմամբ՝ Ռ.Թ. Էրդողանը կարծում է, որ «Թուրքիայի ռազմական ներկայությունը Կատարում կայունության և խաղաղության է ծառայում ոչ միայն Կատարի, այլև Պարսից ծոցի ողջ տարածաշրջանի համար» [4]:

Ինչպես հայտնի է, Լիբիայում Անկարան աջակցում է Ազգային համաձայնության կառավարությանը (ԱՀԿ) Լիբիայի ազգային բանակի (ԼԱԲ) հրամանատար գեներալ Հաֆթարի դեմ

պայքարում: Թուրքական իշխանությունները (Կատարի ֆինանսական և ռազմական աջակցությամբ) ԱՀԿ-ին զենք են մատակարարում և Տրիպոլի են տեղափոխում Իդրիսի սիրիացի վարձկաններին, մինչդեռ ԱՄԷ-ն, Սաուդյան Արաբիան և Եգիպտոսը ԼԱԲ-ի կողմից են հանդես գալիս: Եթե խոսենք Տրիպոլիում թուրքական զենքի մատակարարումների մասին, ապա դրանք ուղղակիորեն խախտում են ՄԱԿ-ի զենքի էմբարգոն, որը Լիբիայի վրա դրվել է դեռևս 2011 թվականին [5, էջ 9]: Սակայն այս դեպքում Անկարայի համար «բոլոր միջոցները լավ են», քանի որ ԱՀԿ-ի քաղաքական գոյատևումը տարածաշրջանում հավասարազոր գործընկերների բացակայության պատճառով դիտարկվում է որպես անկունաքար Միջերկրական ծովի արևելյան սահմանների շուրջ հակամարտությունում թուրքական դիրքորոշմանն աջակցելու հարցում:

2019 թվականի նոյեմբերին Անկարան Լիբիայի ԱՀԿ-ի հետ ծովային սահմանների դելիմիտացիայի մասին հուշագիր է ստորագրել Ֆ. Սարաջի գլխավորությամբ (ԱՀԿ-ն միջազգայնորեն ճանաչված, սակայն ոչ լեգիտիմ կառավարություն է) [6; 7]: Այս համաձայնագիրը փաստորեն Արևելյան Միջերկրածովյան զգալի մասը բաժանեց երկու երկրների միջև [8]: Պաշտոնապես ծովային սահմանների մասին հուշագրի տեքստը չի հրապարակվել, սակայն պայմանավորվածությունների մանրամասները ներկայացնում են թուրքական ՉԼՄ-ները և նույնիսկ քարտեզներ են հրապարակում: Սահմանազատման գիծը շրջանցում է Կիպրոսը և փաստացի հասնում Կրետե՝ ըստ էության զրկելով հունական կղզիների մի մասին սեփական տնտեսական գոտուց [9]: Հուշագիրը նախատեսում է նաև համատեղ երկրաբանա-հետախուզական աշխատանքների իրականացում և Լիբիայի շելֆում նավթային հանքավայրերի մշակում³: Թուրքիայի և Լիբիայի ԱՀԿ-ի միջև զուգահեռ ստորագրվել է նաև ռազմական համագործակցության համաձայնագիր, որը նախատեսում է զինծառայողների ուսուցում և վերապատրաստում: Փաստորեն, դա թույլ կտա Ռ. Թ. Էրդողանին օրինական կերպով Լիբիայում տեղակայել թուրքական ռազմաբազաներ:

Հունաստանը և Եգիպտոսը թուրք-լիբիական այդ համաձայնագրերը «ապակայունացնող» են անվանել, քանի որ, ինչպես կարծում է Հունաստանի ԱԳՆ-ն, այդ հուշագիրը «կոպտորեն խախտում է միջազգային ծովային իրավունքը

²Թուրքիան և Կատարը կիսում են քաղաքական իսլամի գաղափարները, որը ձևավորում է նրանց տարածաշրջանային փոխգործակցությունը և որով սնվող թուրք-կատարական համագործակցությունն ընդգրկում է ամենատարբեր ոլորտներ, այդ թվում՝ պաշտպանական, Էներգետիկական: Թուրքական վերլուծական շրջանակներում նաև տարածված է այն տեսակետը, որ Եգիպտոսը, Իսրայելը և Պարսից ծոցի երկրները՝ Սաուդյան Արաբիայի գլխավորությամբ, ձգտում են մեկուսացնել Թուրքիային և Կատարին տարածաշրջանում, և այդ փաստն էլ ավելի է դրդում երկու երկրներին ամրապնդել կապերը և խորացնել իրենց միությունը:

³ Լիբիայի հետ համաձայնագիրը թուրքական Mavi Vatan («Կապույտ հայրենիք») դոկտրինի արդյունք է, որն առաջին անգամ ներկայացվել է 2006 թ. հունիսին Շովակալ Ռ. Գյուրդենիզի կողմից: Այս տեսլականը ներառում է Սև, Միջերկրական եւ Էգեյան ծովերի ընդարձակ տարածքներ:

և իրավաբանական ուժ չունի»։ Եգիպտոսի դաշնակիցները, առաջին հերթին Սաուդյան Արաբիան և ԱՄԷ-ն, նույնպես քննադատում են Թուրքիային [10]։ Ռ. Թ. Էրդողանի անգուսպ նկրտումներին չի զսպում ոչ այն, որ Անկարայի գործողություններն Արևելյան Միջերկրածովյան տարածաշրջանում դանդաղորեն կհանգեցնեն քաղաքական մեկուսացման [քանի որ նավթի և գազի հանքավայրերի նկատմամբ նրա հավակնություններն այնտեղ պարզապես օրինական հիմքեր չունեն], ոչ էլ այն փաստը, որ ըստ թուրք-լիբիական հուշագրի՝ շարունակելով զենք ու զինյալներ մատակարարել Սիրիայից Տրիպոլի, նա փաստորեն Թուրքիային դարձնում է դեպի արտասահման ահաբեկիչների արտահանման առաջատար։

Պետք է հատուկ նշել Արևելյան Միջերկրածովյան հարցը։ Արդեն ավելի քան մեկ տարի է Անկարան երկրաբանափոփոխական աշխատանքներ է տանում նավթով հարուստ միջերկրածովյան շելֆում, ընդ որում դա անում է առանց հարևանների հետ ծովային գոտիների սահմանագատման հարցի ձևական կարգավորման։ Չնայած պատժամիջոցների սպառնալիքներին, որոնք պարբերաբար հնչում են Անկարայի հասցեին, այն չի պատրաստվում գնալ հետքայլի և դադարեցնել իր կողմից իրականացվող էներգետուրսների որոնումները Միջերկրական ծովի արևելյան մասում [11]։ Թուրքիայի գործողությունները բազմիցս դատապարտվել են ոչ միայն Հունաստանի, Կիպրոսի, Իսրայելի և Եգիպտոսի, այլև ողջ միջագային հանրության կողմից։ Հունակիրական իշխանությունները բնութագրելով ստեղծված իրավիճակը՝ հայտարարեցին, որ «Թուրքիան վերածվում է ծովահեն պետության Միջերկրական ծովի արևելյան մասում» [12]։

Անկարայի և Աթենքի միջև հարաբերությունները հատկապես սրվել էին այն պատճառով, որ թուրքական նավը սեյմիկ հետազոտություն էր սկսել Միջերկրական ծովի արևելյան մասում։ Աշխատանքները տեղի էին ունենում այն շրջանում, որը Հունաստանը համարում է իր բացառիկ տնտեսական գոտին։ Բացի այդ, Թուրքիան միակողմանիորեն սկսել է օգտակար հանածոների մշակման աշխատանքները Կիպրոսի Հանրապետության բացառիկ ծովային գոտում [13]։

Ինչպես նշում է «Middle East Eye» պարբերականի գլխավոր խմբագիր Դ.Հեարսոը, ԱՄԷ-Իսրայել մերձեցումը, որը հնարավոր դարձավ Աբու Դաբիի և Թել Ավիվի հարաբերությունների կարգավորումից հետո, ստեղծվել է նաև Թուրքիային դիմակայելու համար [14]։ Էրդողանի քաղաքական հավակնությունները մշտապես քննադատության են ենթարկվում, իսկ սպառնալիքի աղբյուր են համարվում նույնիսկ

թուրքական մեդիա հարթակները և արբանյակային ալիքները, որոնք» քառս և անկայունություն են ստեղծում արաբական երկրներում⁴։

Սեպտեմբերի 9-ին Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ) նախարարական կոմիտեի նիստում Եգիպտոսի արտաքին գործերի նախարար Ս. Շուքրին կտրուկ հանդես եկավ Անկարայի դեմ՝ ընդգծելով «Թուրքիայի սպառնալուծողական պրակտիկայի դեմ միասնական և ամուր արաբական քաղաքականության» ընդունման անհրաժեշտությունը։ Նա խոսել է արաբական երկրներում թուրքական ինտերվենցիաների աներևակայելի ծավալների մասին, այդ թվում՝ տասնյակ հազարավոր ահաբեկիչների և վարձկանների Սիրիա տեղափոխելու, հազարավոր զրոհայինների Լիբիա ուղարկելու մասին։ Եգիպտոսը բազմիցս ընդգծել է արաբական գործերին Թուրքիայի քաղաքական և ռազմական միջամտության իր մերժումը՝ Անկարայի քաղաքականությունը անվանելով «Էքսպանսիոնիստական» և «գուրկ որևէ օրինական հիմքից» [15]։

Իսկ հոկտեմբերի սկզբին Սաուդյան Արաբիայի առևտրի պալատի ղեկավար Աջլան Ալ Աջլանը կոչ էր արել բոլորտեղ «թուրքական ամեն ինչը», ներառյալ ներմուծումը, ներդրումները և զբոսաշրջությունը, հայտարարելով, որ դա «յուրաքանչյուր սաուդցու պարտքն է [16]։ Հատկանշական է, որ դա համընկավ Ադրբեջանի սանձազերծած ագրեսիվ պատերազմի հետ ընդդեմ Արցախի⁵։ Այսպիսով, Էր Բիհադը փորձում է հարված հասցնել առանց այն էլ թուլացած թուրքական տնտեսությանը՝ երկու երկրների հարաբերությունների սրընթաց վատթարացման ֆոնին⁶։ Թուրքական լիբան մեկ տարվա ընթացքում արժեզրկվեց 22%-ով։ Եգիպտացի քաղաքական գործիչ և հետազոտող Մահմուդ Աբու Հոշը նշել է, որ «թուրքական ներխուժումն արաբական երկրներ և Կովկաս տարածաշրջանը վերածել է մի կարկանդակի, որի համար պայքարում են միջագային և տարածաշրջանային տերությունները»։ Այսպիսով, հենց Ռ. Թ. Էրդողանի քաղաքականության կոնֆլիկտայնությունը, էքսպանսիվությունն ու անհաշտությունը

⁴Կահիրեում այդ պատճառով փակվեց Anadolu Agency-ին։

⁵Մամուլում անգամ լուրեր էին շրջանառվում այն մասին, որ Սաուդյան Արաբիան առաջարկել է Հայաստանին ռազմատեխնիկական աջակցություն, որից հայկական կողմը հրաժարվել է։ Եթե այդ լուրերը ճիշտ են, ապա դա սպառնուցում է Թուրքիայի դեմ գործելու Սաուդյանների վճռականությունը։

⁶Վերջին մի քանի տարիների ընթացքում Էր Բիյադի և Անկարայի միջև հարաբերություններն աստիճանաբար վատացել են։ Երկրները մշտապես գտնվել են բարիկաղների տարբեր կողմերում՝ Սիրիայում, Եգիպտոսում, Լիբիայում կամ Լիբանանում տիրող իրավիճակի մասով։ Երկրները յարվեցին այն բանից հետո, երբ 2018-ի հոկտեմբերին Ստամբուլում թագավորության գլխավոր հյուպատոսության տարածքում սպանվեց սաուդցի ընդդիմադիր լրագրող Ջամալ Խաշոգին։

հանգեցրին նրան, որ այժմ հակաթուրքական տրամադրությունները Մերձավոր Արևելքի երկրներում ավելի ուժեղ են, քան երբևէ: Իսկ Լեռնային Ղարաբաղի շուրջ ռազմական հակամարտության սրման ֆոնին Անկարայի նման պահվածքն էլ ավելի նկատելի դարձավ: Արդեն նկատելի հակաթուրքական խմբավորումը ընդլայնեց իր շրջանակը, ներառելով Հունաստանին, Եգիպտոսին, Կիպրոսին, ԱՄԷ-ին, Ֆրանսիային, Բահրեյնին [17]:

Հաջորդը Արցախյան հակամարտության մեջ Թուրքիայի միջամտությունն էր հոգուտ Ադրբեջանի, որը քարոզվում էր «մեկ ազգ, երկու պետություն» լոզունգով: Կովկասյան և Կասպիական տարածաշրջանները երկու տրանսպորտային միջանցքների հատման կետն են: Առաջինը Չինական «Արևելք – Արևմուտք» նախագիծն է կամ «Մետաքսի մեծ ճանապարհը», «Հյուսիս-Հարավ» երկրորդ երթուղին հնդկական Մումբայը կապում է ռուսական Մանկա Պետերբուրգի հետ: Դրանում Հնդկաստանի և Չինաստանի գործընկեր Իրանն է ներգրավված, որը շատ ֆինանսական միջոցներ և կազմակերպչական ջանքեր է ներդրել տարածաշրջանում ենթակառուցվածքների զարգացման, նոր ուղիների ստեղծման և անվտանգային միջավայր ձևավորելու համար: Այդ տարածաշրջանները Թուրքիայի համար ևս կարևոր նշանակություն ունեն, քանի որ նախագահ Էրդոհանը տարված է Օսմանյան կայսրության վերակենդանացման գաղափարով:

ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան Կովկասը դիտարկում են որպես պլացդարմ՝ Ռուսաստանի և Իրանի վրա հարձակվելու կամ ճնշելու համար: Մյուս կողմից, ծովային առևտրի երթուղիները վերահսկող անգլոսաքսերը շահագրգռված չեն ցամաքային ուղիների տեսքով մրցակիցներ ունենալու մեջ, և այդ պատճառով էլ դեմ չեն լինի Կովկասում քառս ստեղծել և գրավել ռազմավարական շրջաններ՝ տարածաշրջանում իրենց քաղաքական և տնտեսական դիրքերն ամրացնելու համար էներգակիրների և ջրային ռեսուրսների համար մղվելիք պատերազմներում: Կովկասի վերաձևակերպման և քառսացման խնդրի լուծումը դրվեց Թուրքիայի վրա, որը գրեթե իրականացրեց այն: Այդ օպերացիայում առանցքային դեր է խաղացել Ռիչարդ Մուրը՝ MI-6-ի նոր տնօրենը, Թուրքիայում Մեծ Բրիտանիայի նախկին դեսպանը (2014-2017) և Էրդոհանի վաղեմի բարեկամը: Գործողությունների նշանը դեռ ամռան կեսին կարծես թե տրվել էր Լոնդոնից: Ելույթ ունենալով Բաքվում Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախկին նախարար Լիամ Ֆոքսը մատնանշել է ադրբեջանական հասարակության ձգտումը՝ «վերադարձնել օտարված տարածք-

ները» և կոչ է արել ադրբեջանական իշխանություններին գործել ավելի վճռական:

Հուլիսին անցկացված ադրբեջանա-թուրքական զորավարություններից հետո Ադրբեջանի տարածքում մնացին թուրքական զորքերի ստորաբաժանումների մի մասը և ռազմական տեխնիկան, այդ թվում՝ անօդաչու թռչող սարքեր և F-16 ինքնաթիռներ: Միաժամանակ սկսվեց ադրբեջանական բանակի փաստացի վերադասավորումը թուրքական հրամանատարության ներքո, ինչը դժգոհություն առաջացրեց ադրբեջանցի զինվորականների մի մասի մոտ և նույնիսկ սկանդալ առաջացրեց, որի արդյունքում Ադրբեջանի գլխավոր շտաբի պետ զեներալ-գնդապետ Նաջմեդդին Սադիկովը զրկվեց պաշտոնից և մեղադրվեց ռուսական հատուկ ծառայությունների համար աշխատելու մեջ: Այս ֆոնին հայտնվեցին առաջին հաղորդագրությունները Սիրիայի հյուսիսում գրոհայինների հավաքագրման մասին՝ դարաբաղյան հակամարտության գոտի ուղարկելու համար: Այդ տեղեկությունը հաստատվեց բազմաթիվ աղբյուրներից՝ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, Պենտագոնի, սիրիական հետախուզության, ՌԳ արտաքին հետախուզության ծառայության տնօրեն Սերգեյ Նարիշկինի կողմից: Պատկերը լրացրեց Էրդոհանի ռազմատենչ հայտարարությունների շարքը, որոնք փաստեցին, որ ոչ թե Ադրբեջանը, այլ Թուրքիան է պատերազմում Լեռնային Ղարաբաղում: Թուրքական էքսպանսիան դեպի Կովկաս հիմնալի համապատասխանում էր Օսմանյան կայսրության վերականգնման նրա գաղափարին: Կովկասից ճանապարհ է բացվում դեպի Կասպից ծով, Պովոլժե և Կենտրոնական Ասիայի պետություններ: Իսկ անգլոսաքսերը արտոնեցին այն, քանի որ այն լիովին տեղավորվում էր «Ռուսաստանին զսպելու» նրանց ռազմավարության մեջ: Մյուսիքում վերջին իրադարձությունները կարծես Արցախյան պատերազմի շարունակությունն են, որոնք միտված են ամբողջացնելու թուրքական կողմի ձեռքբերումները տարածաշրջանում: Դրանով Թուրքիան ուղիղ ճանապարհ կստանա դեպի Կենտրոնական Ասիայի երկրներ, կկտրի Իրանը Հայաստանից, կչեզոքացնի Չինաստանի ծրագրերը այս տարածաշրջանի հետ կապված: Եթե Մյուսիքում Հայաստանը զիջի միջանցքի հարցում, ապա Թուրքիան կդառնա աշխարհաքաղաքական կարևորագույն գործոն⁷, իսկ Հայաստանը կկորցնի ինքնիշխանության իր վերջին բեկորները:

⁷ Մյուսիքում միջանցքի ստեղծումը չի հակասում նաև մեր ռազմավարական դաշնակցի շահերին, ով, ռազմական վերահսկողություն հաստատելով միջանցքի նկատմամբ, ազդեցության կարևոր լծակներ կստանա թե՛ Թուրքիայի, թե՛ Իրանի, թե՛ Արևմուտքի նկատմամբ:

2021 թ. հուլիսի 21-ին Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունը հրապարակեց Գերմանիայի և ԱՄՆ-ի միջև կնքված համաձայնագիրը «Հյուսիսային հոսք - 2» նախագծի վերաբերյալ [18]: «Հյուսիսային հոսք - 2» նախագիծը Ռուսաստանից դեպի Եվրոպա Բալթիկ ծովով գազի տարանցման 1200 կմ-անոց խողովակաշարերի նախագիծ է, որը նախատեսում էր շրջանցել Ուկրաինայով գազի տարանցումը դեպի Եվրոպա: Դեռ 2019 թ. Միացյալ Նահանգները սանկցիա էր կիրառել նախագծի նկատմամբ, արգելակելով խողովակաշարերի կառուցումը [19]: Սանկցիաները շարունակվել էին ընդհուպ մինչև 2021 թ. մայիս [20]: Սակայն, ինչպես նշեցինք, հուլիսին արդեն նախագծի հիմնական շահառուներից Գերմանիան համաձայնության եկավ ԱՄՆ-ի հետ: Նախագծի արդյունքում Ռուսաստանը ստանում է կարևորագույն տնտեսաքաղաքական լծակներ Եվրոպայի նկատմամբ: Հնարավոր է, որ Արևմուտքը համաձայնվել է նախագծի ավարտին և գործարկմանը Ռուսաստանի՝ նախօրոք արված զիջումների արդյունքում, ինչպիսին կարող էր լինել դեպի Կովկասյան տարածաշրջան Թուրքիայի մուտքը արտոնելը՝ թուրքմենական և դազախական գազերի՝ Կասպից ծովից Ադրբեյջանով, Մեդիթիով, ապա Նախիջևանով և Թուրքիայով Եվրոպա տարանցելու նպատակի իրականացման համար:

Ամփոփելով աշխատանքը, կարելի է եզրակացնել, որ Թուրքիան իր նեոսամանական քաղաքականությունն է շարունակում իրականացնել տարածաշրջանում, սպառնում է հարևան երկրների ազգային անվտանգությանը, իր նպատակների հասնելու գործում խտրություն չի դնում միջոցների մեջ՝ անգամ օգտագործել միջազգային իրավունքին հակասող մեխանիզմներ, ներառյալ զինյալ ահաբեկիչների հավաքագրում և օգտագործում պատերազմի դաշտում: Թուրքիան աջակցում է նաև տարածաշրջանը ապակայունացնող ուժերին՝ փորձելով իր համար յենարան ստեղծել: Եվ չնայած երևում է հակաթուրքական խմբավորման ուրվագիծը, դեռ երկար աշխատանք կպահանջվի մասնակից երկրներից իրենց քայլերը համակարգելու և ավելի վճռորոշ գործելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. <https://www.wsj.com/articles/saudi-arabia-bahrain-and-uae-cut-diplomatic-ties-with-qatar-1496633817> (15.08.2021).
2. <https://www.finanz.ru/novosti/valyuty/katar-spas-turciyu-ot-valyutnogo-kollapsa-1029219252> (15.08.2021).
3. <https://www.google.com/amp/s/www.arabnews.com/node/1747046/amp> (15.08.2021).
4. <https://www.aa.com.tr/en/middle-east/turkeys-troops-in-qatar-serve-stable-gulf-erdogan/1999555> (15.08.2021).
5. United Nations Security Council S/RES/1970 (2011)
6. <https://nordicmonitor.com/2019/12/the-full-text-of-turkey-libya-maritime-agreement-revealed/> (15.08.2021).
7. <https://riafan.ru/1237455-kak-pns-livii-utrati-lo-svoju-legitimnost> (15.08.2021).
8. <https://uwidata.com/6553-mavi-vatan-perspectives-of-turkish-sea-power/> (15.08.2021).
9. <https://www.aa.com.tr/en/africa/analysis-strategic-legal-aspects-of-turkey-libya-deal/1673079> (15.08.2021).
10. <https://m.dw.com/en/egypts-leadership-feels-markedly-threatened-by-turkey/a-54533478> (15.08.2021).
11. <https://english.alarabiya.net/News/middle-east/2020/08/15/Erdogan-says-Turkey-will-not-back-down-in-eastern-Mediterranean-standoff> (15.08.2021).
12. <https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/7664095> (15.08.2021).
13. <https://yandex.ru/turbo/ng.ru/s/news/692173.html> (15.08.2021).
14. <https://www.middleeasteye.net/opinion/new-message-resounds-arab-world-get-ankara> (15.08.2021).
15. <https://english.ahram.org.eg/NewsContent/1/64/379658/Egypt/Politics-/Egypt-FM-urges-unified-and-firm-Arab-policy-again.aspx> (15.08.2021).
16. <https://english.alarabiya.net/business/economy/2020/10/03/Saudi-Arabia-Chamber-of-Commerce-head-calls-for-boycott-of-everything-Turkish> (15.08.2021).
17. <https://www.middleeasteye.net/news/turkey-greece-anti-alliance-hostile-meeting> (15.08.2021).
18. <https://www.auswaertiges-amt.de/de/newsroom/gemeinsame-erklaerung-usa-und-deutschland/2472074> (15.08.2021).
19. <https://www.cnn.com/2019/12/18/us-sanctions-on-nord-stream-2-pipeline.html> (15.08.2021).
20. <https://en.topwar.ru/183233-minfin-ssha-vvel-sankcii-protiv-severnogo-potoka-2.html> (15.08.2021).

Տժնա/Հանձնվել է՝ 16.08.2021
 Քենզիրոնա/Գրախոսվել է՝ 19.08.2021
 Քրյնյա/Ընդունվել է՝ 23.08.2021